ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ-22/47

ք. Երևան «12» «05» 2022թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Գ. Սաֆարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ) մի կողմից, և «Զանգակ-97» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն՝ Ս.Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողը իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 267,395.125 (երկու հարյուր վաթսունյոթ միլիոն երեք հարյուր իննսունհինգ հազար մեկ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն Գնորդի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Ք. Երևան, Կառավարական տուն 2 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011005130 ՀՎՀՀ 02698732	«Զանգակ-97» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Կոմիտասի պող. 49/2 «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ Հ/Հ 217001040013001 ՀՎՀՀ 00830786
Գլխավոր քարտուղար՝ _____ Գ. Սաֆարյան /ստորագրություն/ Կ.Տ	Տնօրեն՝ _____ Ս.Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« 12 » 05 2022թ. կնքված
ՀՀԿԳՄՍՆՄԱՊՁԲ-22/47 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժինները	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ապրանքի						
		Անվանումը, ապրանքային նշանը	Տեխնիկական բնութագիր	չափման միավորը	քանակը	միավորի գինը, ՀՀ դրամ	ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետը
1.	22111110-55	Դասագրքեր	**Գնման առարկա է հանդիսանում «Մաթեմատիկա-1», 1-ին մաս, 1-ին դասարանի դասագիրք-տետր, հեղ.՝ Ս. Մկրտչյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրք–տետր հանրակրթական դպրոցի առաջին դասարանի առաջին կիսամյակի համար: Համապատասխանում է մաթեմատիկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկում է առաջին դասարանի առաջին կիսամյակի համար նախատեսված ծրագրային նյութը: Հիմք է նախապատրաստում թե՛ առաջին դասարանի երկրորդ կիսամյակի և թե՛ տարրական մյուս դասարանների մաթեմատիկայի լիարժեք ուսուցման համար: **Տեխնիկական չափանիշներ** Էջերի քանակը՝ 96 Չափսը՝ 28X20 սմ Գույնը՝ 4X4 Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ2 Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ2 Կարելու ձևը՝ թելակար Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ	հատ	36438	1360	49555680	Մինչև ս/թ օգոստոսի 15-ը
2.	22111110-57	Դասագրքեր	**Գնման առարկա է հանդիսանում «Մաթեմատիկա- 1», 2-րդ մաս /1-ին դասարանի դասագիրք/ հեղ.՝ Ս. Մկրտչյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրք հանրակրթական դպրոցի առաջին դասարանի երկրորդ կիսամյակի համար: Համապատասխանում է մաթեմատիկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկում է առաջին դասարանի երկրորդ կիսամյակի համար նախատեսված ծրագրային նյութը: Շարունակությունն է առաջին դասարանի առաջին կիսամյակի համար նախատեսված դասագիրք–տետրի և հիմք է նախապատրաստում տարրական մյուս դասարանների մաթեմատիկայի լիարժեք ուսուցման համար: **Տեխնիկական չափանիշներ**	հատ	21425	1265	27102625	Մինչև ս/թ օգոստոսի 15-ը

			Էջերի քանակը՝ 96 Չափսը՝ 24X17 սմ Գույնը՝ 4X4 Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ2 Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ2 Կարելու ձևը՝ թելակար Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ					
3.	22111110-58	Դասագրքեր	**Գնման առարկա է հանդիսանում «Կերպարվեստ 1», 1-ին դասարանի աշխատանքային տետր, հեղ.՝ Լեմս Ներսիսյան, Ելենա Գյուլմիսարյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրք–տետր հանրակրթական դպրոցի առաջին դասարանի համար: Համապատասխանում է կերպարվեստ առարկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկում է առաջին դասարանի համար նախատեսված ծրագրային նյութը: Հիմք է նախապատրաստում տարրական մյուս դասարանների «Կերպարվեստ» առարկայի լիարժեք ուսուցման համար: **Տեխնիկական չափանիշներ** Էջերի քանակը՝ 32 Չափսը՝ 20X29 սմ Գույնը՝ 4X4 Թուղթը՝ օֆսեթ 100 գ/մ2 Կազմի թուղթ՝ օֆսեթ 100 գ/մ2 Կարելու ձևը՝ մետաղական	հատ	36901	820	30258820	Մինչև ս/թ օգոստոսի 15-ը
4.	22111110-64	Դասագրքեր	**Գնման առարկա է հանդիսանում «Մաթեմատիկա 2», 1-ին մաս /2-րդ դասարանի դասագիրք/ հեղինակ՝ Ս. Մկրտչյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրք հանրակրթական դպրոցի երկրորդ դասարանի առաջին կիսամյակի համար: Համապատասխանում է մաթեմատիկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկում է երկրորդ դասարանի առաջին կիսամյակի համար նախատեսված ծրագրային նյութը: Շարունակությունն է առաջին դասարանի երկրորդ կիսամյակի համար նախատեսված դասագրքի և հիմք է նախապատրաստում ինչպես երկրորդ դասարանի երկրորդ կիսամյակի, այնպես էլ տարրական մյուս դասարանների մաթեմատիկայի լիարժեք ուսուցման համար: **Տեխնիկական չափանիշներ** Էջերի քանակը՝ 88 Չափսը՝ 24X17 սմ Գույն՝ 4X4 Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ2 Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ2 Կարելու ձևը՝ թելակար Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ	հատ	23501	790	18565790	Մինչև ս/թ օգոստոսի 15-ը
5.	22111110-66	Դասագրքեր	**Գնման առարկա է հանդիսանում «Մաթեմատիկա 2», 2-րդ մաս /2-րդ դասարանի դասագիրք/ հեղինակ՝ Ս. Մկրտչյան** **Բովանդակային չափանիշներ**	հատ	23501	860	20210860	Մինչև ս/թ օգոստոսի 15-ը

			Դասագիրք հանրակրթական դպրոցի երկրորդ դասարանի երկրորդ կիսամյակի համար: Համապատասխանում է մաթեմատիկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկում է երկրորդ դասարանի երկրորդ կիսամյակի համար նախատեսված ծրագրային նյութը: Շարունակությունն է երկրորդ դասարանի առաջին կիսամյակի համար նախատեսված դասագրքի և հիմք է նախապատրաստում տարրական մյուս դասարանների մաթեմատիկայի լիարժեք ուսուցման համար: **Տեխնիկական չափանիշներ** Էջերի քանակը՝ 96 Չափսը՝ 24X17սմ Գույնը՝ 4X4 Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ2 Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ2 Կարելու ձևը՝ թելակար Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ					
6.	22111110-80	Դասագրքեր	**Գնման առարկա է հանդիսանում «Երաժշտություն 3», 3-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Յուրի Յուզբաշյան, Ալինա Փահլևանյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրք հանրակրթական դպրոցի երրորդ դասարանի համար: Համապատասխանում է«Երաժշտություն» առարկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկում է երրորդ դասարանի համար նախատեսված ծրագրային նյութը: Շարունակությունն է երկրորդ դասարանի է«Երաժշտություն» դասագրքի և հիմք է նախապատրաստում չորրորդ դասարանի է«Երաժշտություն» առարկայի լիարժեք ուսուցման համար: **Տեխնիկական չափանիշներ** Էջերի քանակը՝ 96 Չափսը՝ 17X24 սմ Գույնը՝ 4X4 Թուղթը՝ օֆեթ 70 գ/մ2 Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ2 Կարելու ձևը՝ թելակար Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ	հատ	29459	1450	42715550	**Մինչև ս/թ օգոստոսի 15-ը**
7.	22111110-81	Դասագրքեր	**Գնման առարկա է հանդիսանում «Կերպարվեստ -3», 3-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Լ.Ներսիսյան, Ս.Ներսիսյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրք հանրակրթական դպրոցի երրորդ դասարանի համար: Համապատասխանում է «Կերպարվեստ» առարկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկում է երրորդ դասարանի համար նախատեսված ծրագրային նյութը: Շարունակությունն է երկրորդ դասարանի «Կերպարվեստ» դասագրքի և հիմք է նախապատրաստում չորրորդ դասարանների «Կերպարվեստ» առարկայի լիարժեք ուսուցման համար: **Տեխնիկական չափանիշներ**	հատ	16670	1350	22504500	**Մինչև ս/թ օգոստոսի 15-ը**

			Էջերի քանակը՝ 64 Չափսը՝ 17X24 սմ Գույնը՝ 4X4 Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ2 Կազմը՝ ֆուտբորդ 270 գ/մ2 Կարելու ձևը՝ թելակար Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ					
8.	22111110-90	Դասագրքեր	**Գնման առարկա է հանդիսանում «Մաթեմատիկա 4», I մաս, 4-րդ դասարանի դասագիրք, հեղինակ՝ Ս. Մկրտչյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրք հանրակրթական դպրոցի չորրորդ դասարանի առաջին կիսամյակի համար: Համապատասխանում է մաթեմատիկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկում է չորրորդ դասարանի առաջին կիսամյակի համար նախատեսված ծրագրային նյութը: Շարունակությունն է երրորդ դասարանի դասագրքի և հիմք է նախապատրաստում չորրորդ դասարանի երկրորդ կիսամյակում մաթեմատիկայի լիարժեք ուսուցման համար: **Տեխնիկական չափանիշներ** Էջերի քանակը՝ 96 Չափսը՝ 24X17 սմ Գույնը՝ 4X4 Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ2 Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ2 Կարելու ձևը՝ թելակար Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ	հատ	20402	860	17545720	**Մինչև ս/թ օգոստոսի 15-ը**
9.	22111110-92	Դասագրքեր	**Գնման առարկա է հանդիսանում «Մաթեմատիկա 4», II մաս, 4-րդ դասարանի դասագիրք, հեղինակ՝ Ս. Մկրտչյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրք հանրակրթական դպրոցի չորրորդ դասարանի երկրորդ կիսամյակի համար: Այն համապատասխանում է մաթեմատիկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկում է չորրորդ դասարանի երկրորդ կիսամյակի համար նախատեսված ծրագրային նյութը: Շարունակությունն է չորրորդ դասարանի առաջին կիսամյակի դասագրքի և հիմք է նախապատրաստում հինգերորդ և վեցերորդ դասարանների մաթեմատիկայի լիարժեք ուսուցման համար: **Տեխնիկական չափանիշներ** Էջերի քանակը՝ 88 Չափսը՝ 24X17սմ Գույնը՝ 4X4 Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ2 Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ2 Կարելու ձևը՝ թելակար Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ	հատ	20402	790	16117580	**Մինչև ս/թ օգոստոսի 15-ը**

10.	22111110-106	Դասագրքեր	**Գնման առարկա է հանդիսանում «Կերպարվեստ -4», 4-րդ դասարանի դասագիրք հեղ.՝ Լ. Ներսիսյան, Ս. Ներսիսյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրք հանրակրթական դպրոցի չորրորդ դասարանի համար: Համապատասխանում է «Կերպարվեստ» առարկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկում է չորրորդ դասարանի համար նախատեսված ծրագրային նյութը: Շարունակությունն է երրորդ դասարանի «Կերպարվեստ» դասագրքի և հիմք է նախապատրաստում հինգերորդ դասարանի «Կերպարվեստ» առարկայի լիարժեք ուսուցման համար: **Տեխնիկական չափանիշներ** Էջերի քանակը՝ 80 Չափսը՝ 17X24 սմ Գույնը՝ 4X4 Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ2 Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ2 Կարելու ձևը՝ թելակար Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ	հատ	15212	1500	22818000	Մինչև ս/թ օգոստոսի 15-ը

1-10- րդ չափաբաժինների համար

Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:

Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» բառերը:

Դասագրքերի մատակարարումն իրականացվում է Կատարողի կողմից՝ համաձայն կից բաշխման ցուցակի:

Դասագրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:

ԳՆՈՐԴ

---------- Գ. Սաֆարյան

ՎԱՃԱՌՈՂ

---------- Ս.Մկրտչյան

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Չափաբաժին	Անվանումը	Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչություն	Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչու	Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Վայոց_Ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչ.	Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստ.	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Դասագիրք «Մաթեմատիկա 1» I մաս /դասագիրք-տետր/	11533	1466	2667	2369	1676	3775	2574	3411	3392	573	1631	1371	36438
2	Դասագիրք «Մաթեմատիկա 1», II մաս	5066	1083	1713	1807	1201	1757	1767	2049	2340	246	1060	1336	21425
3	Դասագիրք«Կերպարվեստ 1» /աշխատանք. տետր/	11208	1434	2772	3049	1741	3696	2600	3449	3578	615	1637	1122	36901
4	Դասագիրք «Մաթեմատիկա 2», I մաս	7161	879	2039	1531	1174	1962	1559	2409	2026	342	1216	1203	23501
5	Դասագիրք «Մաթեմատիկա 2», II մաս	7161	879	2039	1531	1174	1962	1559	2409	2026	342	1216	1203	23501
6	Դասագիրք «Կերպարվեստ 3»	4956	625	2151	1125	1191	1470	1168	1514	810	331	732	597	16670
7	Դասագիրք «Երաժշտություն 3»	9429	1010	2375	2362	1427	2861	2058	2926	2627	446	1191	747	29459
8	Դասագիրք «Մաթեմատիկա 4», I մաս	6011	963	2112	1322	1169	1763	1452	1499	1935	262	906	1008	20402
9	Դասագիրք «Մաթեմատիկա 4», II մաս	6011	963	2112	1322	1169	1763	1452	1499	1935	262	906	1008	20402
10	Դասագիրք«Կերպարվեստ 4»	4081	606	2416	1169	1005	1216	1176	1206	881	262	686	508	15212
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		72617	9908	22396	17587	12927	22225	17365	22371	21550	3681	11181	10103	243911

Ծանոթություն * 1. Ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների դասագրքերը թողնվում են ի պահ «Զանգակ-97» ՍՊԸ-ում: Ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին դասագրքերով ապահովման նպատակով «Զանգակ-97» ՍՊԸ-ին կտրամադրվի բաշխման ցուցակ:

2. ՀՀ մարզպետարաններին և Երևանի քաղաքապետարանին հատկացվող դասագրքերի քանակի մեջ ներառված է ՀՀ ԿԳՄՍՆ ենթակայությամբ գործող հաստատություններին հասանելիք դասագրքերի քանակը:

3. ՀՀ մարզպետարաններին, Երևանի քաղաքապետարանին կտրամադրվեն բաշխման ցուցակներ՝ ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների:

ԳՆՈՐԴ

---------- Գ. Սաֆարյան

ՎԱՃԱՌՈՂ

---------- Ս.Մկրտչյան

Հավելված N 2
« 12 » 05 2022թ. կնքված
ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ-22/47 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի										
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թվականին ըստ ամիսների, այդ թվում							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	22111110-55	Դասագիրք		49555680	49555680	49555680	49555680	49555680	49555680	**49555680**
2	22111110-57	Դասագիրք		27102625	27102625	27102625	27102625	27102625	27102625	**27102625**
3	22111110-58	Դասագիրք		30258820	30258820	30258820	30258820	30258820	30258820	**30258820**
4	22111110-64	Դասագիրք		18565790	18565790	18565790	18565790	18565790	18565790	**18565790**
5	22111110-66	Դասագիրք		20210860	20210860	20210860	20210860	20210860	20210860	**20210860**
6	22111110-80	Դասագիրք		42715550	42715550	42715550	42715550	42715550	42715550	**42715550**
7	22111110-81	Դասագիրք		22504500	22504500	22504500	22504500	22504500	22504500	**22504500**
8	22111110-90	Դասագիրք		17545720	17545720	17545720	17545720	17545720	17545720	**17545720**
9	22111110-92	Դասագիրք		16117580	16117580	16117580	16117580	16117580	16117580	**16117580**
10	22111110-106	Դասագիրք		22818000	22818000	22818000	22818000	22818000	22818000	**22818000**
	ԸՆԴԱՄԵՆԸ			**267395125**	**267395125**	**267395125**	**267395125**	**267395125**	**267395125**	**267395125**

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

---------- Գ. Սաֆարյան

ՎԱՃԱՌՈՂ

---------- Ս.Մկրտչյան